Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ «Ինչպես արդյունավետ դաս պլանավորել»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Նունե Եղիազարյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. 1.Ինչպես արդյունավետ դաս պլանավորել .դասի տիպերը,կառուցվածքը,նպատակները,խնդիրները,դասավանդման մեթոդները ----------4
3. 1.1 Դասի տիպերը----------5
4. 1.2 Դասի կառուցվածքը----------5
5. 1.3 Դասի նպատակները----------6
6. 1.4 Դասի խնդիրները----------8
7. 1.5 Դասավանդման մեթոդները----------10
8. 2. Դասապլանի կառուցվածքը----------10
9. Դասապլանի ձևանմուշ----------16
10. Եզրակացություն----------18
11. Օգտագործված գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցում շատ կարևոր է համարվում դասի պլանավորումը:Ուսուցիչը,բնականաբար,դասարան մտնելիս պետք է ունենա որոշակի նպատակներ,դասը կազմակերպի այնպես,որ հասնի որոշակի վերջնարդյունքների,ի վերջո՝ պետք առաջին հերթին ինքը հստակ պատկերացում ունենա այն մասին,թե ինչ պետք է անել դասի ժամանակ,ինչ սովորեցնել և ինչպես:

Սկսենք նրանից,որ շատ ուսուցիչներ դժգոհում են օրվա դասապլան գրելու պարտադրանքից,գտնելով,որ դա ժամանակի ավելորդ ծախս է,և բոլորովին չի օգնում ավելի լավը դարձնել դասը:Շատերի կողմից նշվում է նաև այն հանգամանքը,որ շատ հաճախ պատրաստի պլանով դասարան մտնելով՝ուսուցիչը դասապլանը թողնում է մի կողմ ու աշխատում է առանց դրա՝ստեղծագործաբար դասը դարձնելով էլ ավելի հետաքրքիր ու գրավիչ, քան նախատեսված էր դասապլանով:Միանգամից ասենք ,որ ժամանակի առումով,իհարկե,դժգոհությունը տեղին է,որովհետև յուրաքանչյուր դասապլան գրելու համար ուսուցիչը պետք է ծախսի 2-3 ժամ,և հարց է՝ արդյո՞ք նրան կհաջողվի իրականացնել դասապլանում նախատեսվածը,չէ՞ որ դասի կառուցվածքը շատ հաճախ ոչ միայն ուսուցչից,այլև աշակերտներից է կախված,նրանց վարքագծից,հետաքրքրասիրությունից,տված հարցերից և այլն:

Շատ հաճախ աշակերտների կողմից հնչեցրած մի խելացի հարցը այնքան մեծ զրույցի,բանավեճի,քննարկման տեղիք է տալիս,որ դասի համար շատ կարճ ժամանակ է մնում ,և անհնարին է լինում դասապլանը կետ առ կետ իրագործելը:Իսկ աշակերտների հարցերը,ըստ իս, պետք է անպայման պատասխաններ ստանան,որովհետև նրանք մի քանի անգամ ավելի լավ են հասկանում ու սովորում այն,ինչ իրենց հետաքրքրում է,իհարկե,առարկայի շրջանակներում,և ոչ թե այն ,ինչը նախատեսված է այդ օրվա դասապլանով:

Ես ինքս,լինելով նման «դժգոհող» ուսուցիչներից մեկը,որոշեցի ընտրել հենց այս թեման,ուսումնասիրել,երևան հանել օրինակելի դասապլան կազմելու ձևերը,մեթոդները,եղանակները,մանրամասն ուսումնասիրել օրինակելի դասապլանի տարբեր նմուշներ,հասկանալ,թե ինչ կարելի է անել,որ օրվա դասապլանը դառնա ավելի արդյունավետ,որ այն գրվի ոչ թե որպես ընդամենը փաստաթուղթ,որը պետք է ներկայացվի տնօրենությանը կամ կախվի էլեկտրոնային մատյանի համապատասխան մասում,այլ դառնա իսկապես արդյունավետ գործիք ուսուցչի հարուստ «զինանոցում»:

Որպեսզի օրվա դասապլանը լինի ճիշտ ու օրինակելի,անհրաժեշտ է կազակերպելիք դասը մտովի ենթարկել մանրամասն վերլուծության,հասկանալ,թե ինչպիսի կետեր են անհրաժեշտ ու պարտադիր այդ դասապլանում և ինչու են անհրաժեշտ,ինչը պետք է երևան հանել այդ կետերով:

Այդ նպատակի իրագործման համար ուսումնասիրել եմ բազմազան նյութեր՝ հոդվածներ,դասապլանների նմուշներ,չափորոշիչներ,և ստացած ինֆորմացիայի հիման վրա կատարել եմ եզրակացություններ:

1.ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ .ԴԱՍԻ ՏԻՊԵՐԸ,ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,ԽՆԴԻՐՆԵՐԸ,ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Արդյունավետ դաս պլանավորելու համար նախ պետք է հստակ իմանանք՝ ինչ ենք սովորեցնում և ինչպես:Դպրոցական ծրագրերն ու թեմատիկ պլանները արդեն իսկ տալիս են առաջին հարցի պատասխանը,իսկ թե ինչպես պետք է սովորեցնենք կամ ինչպես ենք սովորեցնում,այդ մասին պատմելու են ուսուցիչների կազմած դասապլանները:

Ընդհանրապես արդյունավետ դաս պլանավորելու համար պետք է տիրապետել նյութին,լինել մեթոդապես հարուստ,հստակ իմանալ դասին ներկայացվող պահանջները,նաև գաղափար ունենալ դասի տիպերի,կառուցվածքի,դասի նպատակի,խնդիրների,դասավանդման մեթոդների և դրանց տեսակների վերաբերյալ:

Ելնելով այս ամենից՝ արդեն հասկանալի է դառնում,որ դասին անհրաժեշտ է ներկայանալ դասապլանով,որում արտացոլվելու է դասի ամբողջական բովանդակությունը:Կան դասապլանի մի քանի օրինակելի ձևանմուշներ.ուսումնասիրությունը ցույց տվեց,որ դրանք բոլորն էլ բավականին հետաքրքիր են ու բովանդակային,ըստ էության կարելի է բոլորից օգտվել՝ նայած թե այդ օրվա դասի բովանդակությունն ու թեման ինչպիսի հնարավորություններ են ընձեռում:

Մինչ բուն դասապլանին անդրադառնալը պետք է մի փոքր խոսենք դասի բաղադրիչների մասին:

1.1.ԴԱՍԻ ՏԻՊԵՐԸ

Դասը դասակարգում են ըստ դիդակտիկ նպատակների,գիտելիքների կազմակերպման նպատակների,դասի անցկացման միջոցների և բովանդակության,ուսումնական գործընթացի հիմնական փուլերի,դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս

2.Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման և համակարգման դաս
4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս

1.2.ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացնապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի կառուցվածք: Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝
1. Նոր նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս
3. Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս
4. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս
5. Կրկնողության դաս
6. Կրկնողական-ընդհանրացնող դաս
7. Ստուգողական կամ սխալների ուղղման դաս
8. Համակցված դաս

1.3.ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընդհանրապես դասավանդման գործընթացում առավել կարևորվում է նպատակը,այդ իսկ պատճառով դասի նպատակի հստակեցման վերաբերյալ կխոսենք առավել հանգամանորեն:

Նպատակը նախագծում է,թե ուր պետք է հասնի ուսուցիչը իր գործունեության արդյունքում:Նպատակը առաջին հերթին սահմանում է,թե ինչ պետք է իմանա աշակերտը դասի թեմայի հետ կապված:Նպատակները պետք է լինեն չափելի,հստակ և հասկանալի:Այնուհետև ուսուցչի ուղղորդմամբ այդ իմացածը նա կսկսի կիրառել և մինչև դասի ավարտը կերևա վերջնարդյունքը:

Դասի նպատակները պետք է սահմանել հստակ:Կարելի է այդ մասին իրազեկել նաև աշակերտներին:Նրանք պետք է իմանան,թե տվյալ դասի հետ կապված ինչի պետք է հասնեն իրենք:Նպատակները պետք է լինեն լոկալ:Դա նշանակում է,որ ուսուցիչը

պետք է հասկանա,որ իրենից չի պահանջվում մեկ դասաժամի ընթացքում ,օրինակ,աշակերտների մեջ հսկայական փոփոխություններ իրականացնել,բավական է սահմանափակվել տվյալ դասի շրջանակներում և չդնել ավելի մեծ նպատակներ,քան թույլ են տալիս տվյալ դասի հնարավորությունները:Կան նաև դասապրոցեսի հետ կապված գլոբալ նպատակներ.դրանք տարեկան նպատակներն են,որոնց իրականացումը պետք է տեղի ունենա աստիճանաբար,ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

Դասի նպատակները տարբեր մանկավարժների կողմից տարբեր տեսակների են բաժանվել,ներկայումս դպրոցներում աշխատող ուսուցիչների մեծ մասը դասապլանում նպատակները նշելիս առանձնացնում են դասի նպատակների երկու տեսակ՝ակադեմիական և սոցիալական:Իմ կարծիքով շատ հասարակ բաժանում է և ոչ շատ կոնկրետացված:Հասմիկ Այվազյանի գրքում հանդիպեցի նպատակների հետ կապված մեկ այլ դասակարգում՝ նպատակները լինում են **կրթական,դաստիարակչական և զարգացնող**:Կարծում եմ, որ տեղին կլինի մի փոքր ավելի մանրամասնորեն ուսումնասիրել դասի նպատակների տեսակները:

Կրթական նպատակներ: Այս նպատակները ենթադրում են գիտելիքների և հմտությունների ձեռքբերում: Այս տեսակի նպատակները կարելի է ձևակերպել հետևյալ բայերով՝ համակարգել,կատարել,թվարկել,ցուցադրել,գրել,սահմանել, անվանել,ընտրել:Նպատակները պետք է ցույց տան ոչ թե այն, թե ինչ պետք է անի ուսուցիչը դասի ժամանակ, այլ թե ինչ պետք է իմանան և անեն աշակերտները:

Դաստիարակչական նպատակներ: Այս նպատակները ենթադրում են ոչ թե ակադեմիական գիտելիքների ստացում, այլ արժեհամակարգի զարգացում ու հարստացում,և ոչ միայն:Դաստիարակված քաղաքացի ունենալը յուրաքանչյուր հասարակության համար կարևոր է, իսկ դաստիարակության հիմքը շատ հաճախ դրվում է դպրոցում և, դժբախտաբար,շատ դեպքերում խնդիրը մնում է միայն դպրոցի ուսերին: Դաստիարակության մեջ է մտնում գիտելիքների,ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը,անձնային որակների բարելավումը,ինքնուրույնության ձևավորումը,պատշաճ վարքագծի դրսևորումը: Դաստիարակչական նպատակները պետք է ձևակերպել շատ կոնկրետ: Օրինակ գրականության դասաժամերին շատ հեշտ է այդպիսի նպատակների ձևակերպումը,որովհետև գրական ստեղծագործությունների վերլուծությունը այդ հնարավորությունը տալիս է: Օրինակ կարելի է ձևակերպել այսպիսի նպատակներ՝ հետաքրքրություն առաջացնել այսինչ գրական կերպարի

նկատմամբ, մղել ակտիվության, հնարավորություն տալ աշակերտներին արտահայտել սեփական կարծիքները և բանավեճի արդյունքում,միմյանցից սովորելով,գտնել ճշմարտությունը՝ որ դիրքորոշումն է ճիշտ և ինչու:

Զարգացնող նպատակներ: Նպաստում են՝ առանձնահատուկ և կրթական հմտությունների ձևավորմանը, մտային
գործողությունների կատարելագործմանը, զգայական միջավայրի, սովորողների բանավոր խոսքի,
երկխոսության հաղորդակցման մշակույթի զարգացմանը, ինքնավերահսկման և ինքնագնահատման
իրականացմանը, իսկ ընդհանրական՝ անհատի կայացմանը և զարգացմանը:Այս նպատակները կարելի է ձևակերպել հետևյալ բառերով՝ սովորել համեմատել,սովորել առանձնացնել կարևորը,սովորել կիրառել,սովորել ստեղծել:
Աշակերտները պետք է ակտիվ մասնակցություն ունենան իրենց ուսումնառության գործընթացին,նրանք պետք է հստակ հասկանան,թե որն է դասի նպատակը:Նրանք նույնպես պետք է ձգտեն հասնել այդ նպատակի իրագործմանը:

1.4.ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երբ արդեն ուսուցիչը հստակ ձևակերպել է դասի վերաբերյալ իր նպատակները,գիտի,թե ինչ պետք է ստանան այդ օրվա դասից իր աշակերտները և ինչ վերջնարդյունք է ակնկալում ստանալ դասի ավարտին,նա կարող է արդեն մտածել նաև խնդիրների մասին: Նպատակին հասնում են բազմաթիվ խնդիրներ հաղթահարելու արդյունքում: Իսկ խնդիրը առաջադրվում է վերջնական նպատակին հասնելու հաշվարկով: Ուսուցիչը պետք է հմուտ լինի այնքան,որ աշակերտներին ուղղորդի ճիշտ խնդիրներ դնելու և դրանց լուծմանը հասնելու ընթացքում:Այդ գործընթացը կոչվում է ուսուցման մարտավարություն: Այսինքն՝ ուսուցիչը իր դասապլանում նախօրոք սահմանում է ուսուցման նպատակը, խնդիրները, դասարանում աշակերտներին ուղղորդում է,որ անձամբ հասկանան խնդիրները և քայլեր անեն դրանց լուծման ուղղությամբ:Խնդիրը դրվում է հատուկ այդ դասաժամի համար,այն պետք է լուծվի տվյալ դասաժամի ընթացքում: Այլ կերպ ասած՝ ուսուցիչը սահմանում է նպատակ և իր սահմանած նպատակը հստակեցնում է գործնական խնդիրներով: Օրինակ եթե դասի նպատակն այն է,որ աշակերտները իմանան ձայնավոր հնչյունների ուղղագրությունը,ապա խնդիրը կարող է լինել հետևյալը՝

կազմել կապակցված տեքստ՝ օգտագործելով հնարավորինս մեծ թվով ձայնավոր հնչյունների ուղղագրությանը վերաբերող բառեր:

Ինչպես երևում է օրինակից,խնդիրը դառնում է մի քայլ՝ նպատակի իրագործման ճանապարհին:

Ճիշտ կառուցված դասապրոցեսում տարբերակում ենք դասի խնդրի 3 տիպեր՝

1-ին տիպի խնդիրներ: Գիտելիքների ստացման խնդիրներ: Միտված են որևէ գործողության
կատարման հմտությունների ուսուցմանը: Օրինակ՝ գրագետ գրելը, համացանցից օգտվելը, անհրաժեշտ տեղեկատվության փնտրումը և
այլն:

2-րդ տիպի խնդիրներ: Հմտությունների ձեռքբերման խնդիրներ: Այս խնդիրները պահանջում են
տարբերել ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարումը սխալ կատարումից: Օրինակ՝ տեաձև աղյուսակի միջոցով ներկայացնել դրական ու բացասական հերոսներին

3-րդ տիպի խնդիրներ: Դիրքորոշման ձևավորման խնդիրներ: Այս խնդիրները պահանջում են
ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարման առանձնահատկությունների սահմանման,մեկնաբանման և հիմնավորման կարողություններ:

Օրինակ՝ որևէ վեպի կերպարները ուսումնասիրելիս տալ սեփական դիրքորոշումը կերպարների բնավորության լավ և վատ կողմերի վերաբերյալ:

Աշակերտների համար ամեն դասին պետք է հստակ ձևակերպվեն խնդիրները,որպեսզի աշակերտները չընկնեն անորոշության մեջ և հստակ հասկանան իրենց անելիքը:Խնդիրները ձևակերպելիս պետք է խուսափել հետևյալ բայերից՝հասկանալ,վայելել,ընկալել,գիտակցել,իմանալ,զգուշանալ:Իսկ որպեսզի դասի խնդիրները առավել հստակ և աշակերտների համար տեսանելի լինեն,կարելի է վերցնել հետևյալ բայերը՝ ցույց տալ, զարգացնել, վերլուծել, գնահատել, կազմակերպել, ստեղծել, գրել, պլանավորել, կիրառել, արտադրել, կազմել, ներառել, կառուցել:

Խնդիրները կարևորվում են նաև այնքանով,որ խնդիրների կատարումից է կախված աշակերտների գնահատականը:

1.5.ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մեթոդների տարբեր դասակարգումներ կան, բայց ժամանակակից ուսուցումը նախընտրելի է կազմակերպել աշակերտակենտրոն սկզբունքով,այսինքն՝ կիրառել մեթոդներ,որտեղ հիմնական դերակատարը աշակերտներն են:Այդ մեթոդները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ պասիվ, ակտիվ և փոխներգործուն:

1.Պասիվ մեթոդներից են դասախոսությունը, արտահայտիչ ընթերցանության մեթոդը, հարցումը: Այս դեպքում ուսուցիչը ուղղորդում է, իսկ աշակերտները լսում են ու պատասխանում իրենց հասկացածը, մտապահածն ու սովորածը:

2.Ակտիվ մեթոդներից են ստեղծագործական առաջադրանքները, զրույցը, բանավեճը: Այստեղ աշակերտները բանավեճի մեջ են մտնում ուսուցչի հետ,ակտիվ քննարկում են, արտահայտում իրենց կարծիքը, առաջադրում հարցեր:

3.Փոխներգործուն մեթոդներից են համագործակցություն ապահովող մեթոդները: Այս դեպքում աշակերտները կազմում են խմբեր, օգնում միմյանց, սովորում միմյանցից, միմյանց հետ քննարկում իրենց անելիքները,խնդիրները,դրանց լուծման ուղիները:

2.ԴԱՍԱՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գաղափար կազմելով դասի նպատակների,խնդիրների,տիպերի մասին՝ դեռ չի նշանակում,որ արդեն կարող ենք ճիշտ պլանավորել դասը,որովհետև մենք թվարկել ենք դասապլանում ներառվող բաղադրիչների նվազագույն մասը: Դասապլանում իրականում ամենայն մանրամասնությամբ արտացոլվում է ամբողջ անելիք աշխատանքը ,և դեռ էլի ունենք կետեր,որոնց կանդրադառնանք ստորև ու կներկայացնենք,թե արդյունավետ դասի պլանավորման համար էլ ինչ է մեզ անհրաժեշտ:

Հայտնի է,որ ուսուցման պրոցեսի ընթացքում ուսուցիչը պետք է կարողանա երեխաներին փոխանցել գիտելիք,նրանց մոտ զարգացնել գործնական,կիրառական հմտություններ,սովորեցնի նրանց ամեն ինչի վերաբերյալ ունենալ սեփական կարծիք ու դիրքորոշում և այնպես պիտի անի,որ այդ կարծիքն ու դիրքորոշումը լինեն խելացի,բխեն արդարության ու ազնվության դիրքերից,այն էլ՝ այն դեպքում,երբ երեխաները շատ հաճախ են կյանքում անարդարության ականատես լինում:Բացի այդ՝ պետք է երեխաների մեջ սերմանել արժեքներ՝ ոչ նյութական,այլ՝ բարոյական,մարդկային:

Այս ամենը ,իհարկե, բանիմաց,խելացի,գործին գիտակ ուսուցիչը ամեն օր անում է,բայց ,եթե դա չի ուրվագծվում դասապլանում, չի ստանում համակարգված գրավոր տեսք,լինում է տարերային,անկազմակերպ և հաճախ չի ծառայում նպատակին:

Ասվածների հիման վրա ես հակված եմ գալ այն եզրակացության,որ դասապլանում այնքան կարևոր չէ դասի ընթացքի նկարագրությունը, որքան կարևոր է դասի նպատակի հստակ սահմանումը տալը,դասի խնդիրները ձևակերպելը:

Կարողունակությունների զարգացում: Ուսուցիչը պետք է հստակ հասկանա,թե տվյալ դասաժամի ընթացքում հատկապես որ կարողունակությունները կարող է զարգացնել երեխաների մոտ,ինչպիսի հնարավորություններ է ընձեռում տվյալ դասի թեման: Օրինակ հայոց լեզվի դասաժամերի ընթացքում պետք է առաջարկվի համագործակցային մեթոդով այնպիսի վարժությունների կատարում,որոնց արդյունքում կզարգանա երեխաների սովորել սովորելու կարողունակությունը,լեզվական գրագիտությունը՝ որպես կարողունակություն:Իսկ գրականության դասաժամը հնարավորություն է տալիս զարգացնել ինչպես նշված երկու կարողունակությունները, այնպես էլ շատ այլ կարողունակություններ՝ ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային, եթե ուսուցիչը հմուտ է և կարողանում է աշակերտներին ճիշտ ուղղորդել,ապա կառաջարկի նաև այնպիսի աշխատանքներ, որոնք կզարգացնեն երեխաների թվային և մեդիա կարողունակությունները:

Ընդհանրապես գոյություն ունեն դասապլանի բազմաթիվ պատրաստի օրինակներ,ուսուցիչը ազատ է ըստ իր ցանկության կատարել ընտրություն,թե դրանցից որը օգտագործի:Ես ուսումնասիրել եմ դրանցից մի քանիսը,եկել եմ այն եզրակացության,որ ըստ տարբեր դասաժամերի համար նախատեսված անելիքների կարելի է ընտրել այս կամ այն դասապլանը,իսկ որպեսզի ունենամ օրինակելի դասապլան,որում արտացոլվում է հնարավորին չափ շատ աշխատանք,ես կազմել եմ իմ սեփական դասապլանի օրինակը, իհարկե, իմ ուսումնասիրած դասապլանների օրինակների հիման վրա:

Խաչվող հասկացություններ: Խաչվող հասկացությունները ապահովում են հայոց լեզվից և գրականությունից ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ:Խաչվող հասկացությունները,ըստ նոր պետական շափորոշչի, ութն են՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք

- Կառուցվածք և գործառույթ
- Կայունություն և փոփոխություն
- Անհատներ և հարաբերություններ
- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ
- Փոփոխություն և զարգացում

Յուրաքանչյուր դասապլան կազմելիս ուսուցիչը պետք է մի քանի րոպե մտածի և առանձին տողով նշի,թե որ ընդհանրական հասկացությունները կհարաբերվեն իր դասի բովանդակության հետ ,և ինչպես է ինքը դա ներկայացնելու:

Միջառարկայական կապեր: Անվանումը արդեն ենթադրում է,թե ինչի մասին է խոսքը:Ուսուցիչը պետք է նախօրոք դասապլանում ամրագրի,թե տվյալ դասը որքանով է կապված այլ առարկաների դասերի հետ:Յուրաքանչյուր առարկա առարկաների համակարգում ունի իր տեղը և իր աղերսները ունի մնացած առարկաների հետ: Միջառարկայական կապերի մասին առաջին հերթին պետք է մտածեն ծրագրերն ու դասագրքերը ստեղծողները,նրանք պետք է հոգան այն մասին, որ, օրինակ, աշակերտները պատմության ու գրականության դասաժամերին միևնույն ժամանակաշրջանի վերաբերյալ նյութերը ուսումնասիրեն: Կամ, օրինակ, քերականական որևէ թեմա անցնեն նախ հայոց լեզվից, հասկանան, թե խոսքը ինչի մասին է, նոր միայն սովորեն այլ լեզվի քերականական միևնույն իրողության մասին,և ոչ թե հակառակը:

Իհարկե,ուսուցիչը ևս միջառարկայական կապերի ապահովման հարցում ունի իր դերը: Գործնականում հայոց լեզվի ժամերը այդ հնարավորությունը մեծապես ընձեռում են: Կարելի է ցանկացած թեմա անցնելիս անցածը ամրապնդելու համար հանձնարարել կազմել նախադասություններ կամ կապակցված տեքստ այդ օրվա ֆիզիկայի կամ կենսաբանության վերաբերյալ: Փորձը ցույց է տալիս,որ երբ երեխաները հնարավորություն են ստանում ցուցաբերել այլ առարկայի դասաժամին իրենց ձեռք բերած գիտելիքները,նրանք դա անում են մեծ սիրով ու ոգևորությամբ: Դե, իսկ հայ գրականությունը անհնար է պատկերացնել առանց պատմության ու հայոց լեզվի այն աստիճանի,որ ավելորդ եմ համարում այստեղ այդ հարցը ավելի մանրամասնելը:

Անհրաժեշտ սարքավորումները: Անհրաժեշտ սարքավորումները գործնական (սրվակներ, չափանոթներ, քանոններ, կշեռքներ և

այլ չափիչ սարքեր) և լաբորատոր աշխատանքների ու ցուցադրությունների համար անհրաժեշտ սարքավորումներն են: Այդ շարքում իրենց տեղն ունեն նաև կրթական տեխնիկական միջոցները՝ պրոյեկտոր, տեսա և ձայնա նվագարկիչներ, հեռուստացույց, համակարգիչ, տեսա և ֆոտոխցիկներ ,էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Կարելի է այս ցուցակին ավելացնել նաև դիդակտիկ և ցուցադրման համար անհրաժեշտ նյութերը՝ քարտեր, թեստեր, պաստառներ, կինոնկարներ, աղյուսակներ, սկավառակներ և այլն: Գրատախտակը ևս համարվում է դասի համար անհրաժեշտ սարքավորում:Սրանց մասին ևս պետք է նշվի դասապլանում: Ուսուցիչը դասը պլանավորելիս պետք է նախապես հավաստիանա,որ ապահովված են այն բոլոր անհրաժեշտ սարքավորումները,որոնց ապահովման պատասխանատուն ինքն է ,և որոնք անհրաժեշտ են այդ օրվա դասապրոցեսը կազմակերպելու համար:

Գնահատում: Դասի կարևորագույն մասը պետք է համարել գնահատումը: Ճիշտ է, իհարկե, որ փորձված ուսուցչի աշակերտները արդեն սովոր են գնահատականին չնայել, չհարցնել միավորային գնահատականի մասին, որովհետև նրանց հետ տարված աշխատանքի արդյունքում նրանք գիտակցում են, որ կարևորը ոչ թե թվանշանն է, այլ դասից ստացած գիտելիքներն ու բավականությունը և այն զգացողությունը,որ ժամանակը իզուր չվատնեցին: Սակայն, բնականաբար, նրանք սպասում են ուսուցչի տված թեկուզև ոչ միավորային գնահատականին: Համագործակցային աշխատանքը անպայման պետք է գնահատել ,եթե նույնիսկ անհատական աշխատանքը չի երևում,կարելի է գնահատել ամբողջ խմբին: Մի խոսքով,որպեսզի ավելի կարճ ասեմ,նշեմ միայն այն,որ ուսուցիչը դասապլանում պետք է նշի,թե ինչպես է գնահատելու իր հանձնարարած այս կամ այն աշխատանքը:

Դասի ընթացքը: Շատերի կողմից դասի ընթացքի նկարագրությունը համարվում է դասապլանի կարևորագույն բաղադրիչներից մեկը:Իհարկե,դա այդպես էլ կա:Այստեղ ներկայացվում է դասի վարման գործողությունների հաջորդականությունը:

Այս բաժնում ներկայացվում է դասի ընթացքը, որտեղ ուսուցիչը տալիս է առանձին տերմինների և հասկացությունների ձևակերպումներ, ծավալուն ներկայացնում է ուսումնական նյութը և պատկերային միջոցների կիրառման հնարքները: Անհրաժեշտ է ուշադիր լինել պատկերներով կառուցվող մեթոդական հնարքների նկարագրման ժամանակ,որովհետև այն ինչն ուսուցչին դյուրին է թվում,աշակերտների համար հաճախ անհամեմատ դժվար է լինում: Այդ է պատճառը, որ պլանում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն նկարագրել դասարանի հետ աշխատանքի մեթոդաբանությունը: Եթե ուսուցիչն ուզում է կիրառել հայտնի մարդկանց խոսքերը, ապա դասի պլանում այդ խոսքերը պետք է վերցնել չակերտների մեջ և նշել այն

գիրքը, որից վերցվել են խոսքերը, նշել գրքի հրատարակման տարեթիվը և տեղը, հրատարակչությունը, էջը:Դասի ընթացքը ենթադրում է երկու տեսակի գործունեություն՝ուսուսչի և աշակերտների:Այդ իսկ պատճառով շատ հարմար կլինի,եթե դասապլանում առանձնացվի,թե դասի տվյալ փուլում ինչ պետք է անեն աշակերտները և ինչ պետք է անի ուսուցիչը: Արդյունավետության տեսանկյունից պետք է մշակել միանգամից մի քանի դասերի պլաններ,ձևակերպել յուրաքանչյուր դասի նպատակը և այդ դասի տեղը դասերի համակարգում: Սա հնարավորություն է տալիս փոխկապակցել տարբեր դասերը և նպաստում է ժամանակի ռացիոնալ տնօրինմանը: Ինչքան միևնույն թեմայի դասերը սերտորեն են կապված միմյանց հետ, այնքան դասն ինքն իրենով ավարտուն կլինի, այնքան աշակերտների գիտելիքներն ավելի խորը կլինեն:

Որպես օրինաչափություն՝ երկար տարիներ աշխատող ուսուցիչները արդեն շատ են հմտանում դասապլան կազմելու հարցում և սկսում են նկատել,որ ըստ էության դասապրոցեսները,որքան էլ լինեն ստեղծագործ աշխատանք,որովհետև աշխատում ենք անհատների հետ,ովքեր ,լինելով երեխա, անկանխատեսելի են և իրենք իրենցով արդեն իսկ ապահովում են դասի ստեղծագործ բնույթը,կազմվում են գրեթե քայլերի նույն հաջորդականությամբ:Հասմիկ Այվազյանը,օրինակ,առաջարկում է այն գաղափարը,որ ըստ դասի տիպերի կարելի է կազմել ստանդարտ քայլաշարեր: Օրինակ նոր նյութի յուրացման դասի համար առաջարկում է դասի ընթացքի հետևյալ քայլաշարը:

Քայլ 1 - ուսուցանվող նյութի նախնական ներմուծում՝ հաշվի առնելով մասնակիցների բարձր մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները:

Քայլ 2 – մատնանշել ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները:

Քայլ 3 - ձևավորել հիշելու և հիշողությունում երկարատև պահպանելու մոտիվացիա:

Քայլ 4 – զարգացնել մտապահման տեխնիկան (աշխատել հիշողությանն աջակցող նյութերով,կատարել իմաստային խմբավորում)

Քայլ 5 - ուսուցչի ուղղորդմամբ մասնակի եզրահանգումների և ուղղակի կրկնողությունների միջոցով կատարել նյութի նախնական ամրապնդում

Քայլ 6 – վերահսկել նախնական մտապահման արդյունքները

Քայլ 7 – կատարել պարբերական համակարգված կրկնողություններ՝ սկզբում կարճ ժամանակահատվածներում, ապա ավելի երկար ժամանակահատվածում, համադրելով վերարտադրության նկատմամբ տարաբնույթ պահանջների հետ, այդ թվում նաև դիֆերենցված առաջադրանքների նկատմամբ:

Քայլ 8 - աշակերտներին մղել ներքին կրկնողության և նոր գիտելիքների ձեռք բերման համար նախկինում ստացած գիտելիքների և հմտությունների մշտապես կիրառման:
Քայլ 9 - հենքային նյութը հաճախակի ներառել գիտելիքների վերահսկողության մեջ, նյութի հիշման և կիրառման արդյունքները կանոնավոր գնահատել:
Բնականաբար կարիք չկա ամբողջ նյութը այստեղ վերաշարադրել,բայց նշեմ,որ այդ աշխատանքը շատ մեծ օգնություն է ուսուցչին,որովհետև հստակ քայլերի հերթականությունը արդեն ամեն ինչ նախատեսում է:
Հավելեմ նաև,որ վերապատրաստման ընթացքում մենք սովորեցինք հինգ քայլով և ԽԻԿ համակարգով դասապլանի կազմումը:Այն ևս գործնականում կկիրառենք,որովհետև արդյունավետ դասապլաններից մեկը կարող է համարվել:Իսկ այստեղ ես կտեղադրեմ դասապլանի իմ կազմած ձևանմուշը,որը ստեղծել եմ մի շարք դասապլանների ուսումնասիրության արդյունքում:
Վերջնարդյունքներ: Ժամանակակից չափորոշչով սահմանվում է,որ ուսուցման պրոցեսը հստակ նպատակներ հետապնդելուց բացի պետք է ունենա հստակ վերջնարդյունքներ: Այսինքն եթե ուսուցիչը որոշակի ժամանակահատվածի համար ինչ-որ նպատակ է դրել, ապա նա պետք է հստակ սահմանի նաև վերջնարդյունքներ,այսինքն պետք է իր նպատակները վերածի դասապրոցեսի և տա հստակ նկատելի վերջնարդյունքներ: Վերջնարդյունքները սահմանված են չափորոշչով և առարկայական ծրագրերով: Ուսուցիչը պետք է դասապլանում առանձին տողով ներկայացնի ակնկալվող վերջնարդյունքները և դասի ավարտին իր համար փաստի, որ իսկապես եկել է այդ վերջնարդյունքներին:

ԴԱՍԱՊԼԱՆԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Ուսուցիչ	Ն.Եղիազարյան
Դասարան	7-րդ
Ամիս,ամսաթիվ	10.12.2022 թ.
Դասի տևողությունը	45ր
Առարկան,դասի թեման	Հայոց լեզու.‘Գոյականի հոլովները’/կրկնություն/
Դասի տիպը	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)

Դասի կառուցվածքը	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս
Դասի նպատակները	**Կրթական**- ամրապնդել գիտելիքները գոյականի հոլովների վերաբերյալ **Դաստիարակչական**-դաստիարակել միմյանց հանդեպ հարգանք,համագործակցելու ունակություն,ընկերասիրություն **Զարգացնող**-զարգացնել տարբեր հոլովաձևերը միմյանցից տարբերելու և խոսքի մեջ ճանաչելու ,ինչպես նաև տարբեր հոլովաձևերով դրված բառերը խոսքի մեջ ճիշտ գործածել կարողանալու հմտություններ:
Խնդիրները	Տրված տեքստում գտնել գոյականները և որոշել,թե դրանք ինչ հոլովաձևերով են գործածվել: Տրված բառի տարբեր հոլովաձևերով կազմել նախադասություններ:
Մեթոդները	Խմբային աշխատանք: Հարցուպատասխանի մեթոդ:
Ձևավորվող կարողունակությունները	Լեզվական գրագիտություն և կարողունակություն,սովորել սովորելու կարողունակություն
Խաչվող հասկացություններ	Կառուցվածք և գործառույթ
Միջառարկայական կապեր	Գրականություն
Անհրաժեշտ սարքավորումները	Օժանդակ նյութ՝'Մինչև առաջին անձրևը' պատմվածքի տեքստը՝տպագրված թերթիկների վրա,դասագիրք,տետրեր,գրիչներ,գրատախտակ,կավիճ:
Դասի ընթացքը	Նախապատրաստական մասում կատարել հաշվառում,խթանման նպատակով կազմակերպել

	բանավոր հարցուպատասխան ‘Գոյական’ թեմայի վերաբերյալ:/10ր/ Այնուհետև անցնել դասի հիմնական մասին՝ վարժությունների միջոցով նյութի ամրապնդմանը: Քայլ 1 - բացահայտել նախատեսված աշխատանքի նպատակը:/3ր/ Քայլ 2 – վերարտադրել առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները:/7ր/ Քայլ 3 – կատարել տարբեր խնդիրների վարժություններ և առաջադրանքներ,այս դեպքում՝ խմբային:/10ր/ Քայլ 4 – ստուգել կատարված աշխատանքները:/5ր/ Քայլ 5 – քննարկել , ուղղել սխալները և գնահատել:/5ր/ Քայլ 6 –հանձնարարել տնային առաջադրանք:/5ր/
Գնահատում	Քանի որ աշխատանքը խմբային է,գնահատվելու են խմբերը: Դասը կանցկացվի մրցույթի ձևով,շուտ ավարտող խումբը կստանա լրացուցիչ միավոր:Խմբերը ուսուցչի ուղղորդմամբ կգնահատեն միմյանց,այսինքն կուղղեն միմյանց աշխատանքներում տեղ գտած սխալները, կհամեմատեն,ըստ այդմ կորոշեն,թե որ խումբը որերորդ տեղն է գրավում: Ուսուցիչը լրացուցիչ հարցուպատասխանի արդյունքում դասամատյանում կնշանակի գնահատականներ:
Վերջնարդյունք	Դասի ավարտին աշակերտները պետք է կարողանան հստակ կիրառել իրենց՝ վերջին մի քանի դասաժամերի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Պետք է կարողանան ճանաչել հոլովները,դրանք իրարից տարբերել,տարբեր հոլովաձևերի բառերը կիրառել նախադասությունների մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարած աշխատանքը՝ ասեմ հետևյալը.իմ կողմից ուսումնասիրվեց ՝Ինչպես արդյունավետ դաս պլանավորել՝ թեման:Թեման արդիական է և խիստ կարևոր,որովհետև դասապլանի կազմումը ուսուցչի աշխատանքային գործունեության մեջ բավականին մեծ տեղ է գրավում:Ես փորձեցի վեր հանել դասապլանի կազմման մանրամասները և մանրամասնորեն խոսեցի այն մասին,թե որ դետալը ինչի համար է անհրաժեշտ:Արդյունքում եկա այն եզրակացության,որ դասապլան գրելը, բավականին կարևոր լինելուց բացի, նաև անհրաժեշտ է,որովհետև այն բավականին հեշտացնում է ուսուցչի աշխատանքը,մանավանդ այն դեպքում,երբ ուսուցիչը արդեն գիտակցաբար է գրում դասապլան և կարողանում է ճիշտ օգտվել արդեն պատրաստի կաղապարներից և ճիշտ հարմարեցնել իր օրվա դասանյութին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ‘Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազ կազմման գործընթացում’-Հասմիկ Այվազյան-Երևան.2014թ.
2. ‘Ուսուցման արդյունավետ հնարներ’-Ս. Խաչատրյան-Երևան.2020թ.
3. ‘Մայրենի’,‘Հայոց լեզու’,‘Գրականություն’ և ‘Հայ գրականություն’ առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր.1-12-րդ դասարաններ